

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 16:00-ին կայացած նիստի

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի հետևյալ անդամները.

Անդրանիկ Վերանյան	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Կարեն Զադոյան	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Նարինե Մախլյան	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Վիկտոր Ենգիբարյան	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Պողոս Շահինյան	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Շիրակ Սիբայեյան	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
Սասուն Համբարձումյան	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
Լիա Խաչատրյան	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Արման Ոսկանյան	«Տավուշի զարգացման» ՀԿ
Ալեքսանդր Տեր-Հովակիմյան	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Միհրան Հովհաննիսյան	«Եղվարդ» ՋՕԸ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ
Հազարապետ Նազարյան	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Կարինե Մովսիսյան	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
Լիլիթ Ասատրյան	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Աննա Մալիկյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ օգնական
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ-ի խորհրդի նախագահ

Նիստին ներկա էր նաև հետևյալ ՉԼՄ ներկայացուցիչը.

Լիլիթ Կասյան

Հայաստանի 2-րդ հեռուստատեսային լրագրող

Նիստը նախագահելու համար Պողոս Շահինյանն առաջարկեց Կարեն Զադոյանի թեկնածությունը: Կարինե Մովսիսյանն առաջարկեց որպես նախագահող ընտրել Շահառուների խորհրդի նախորդ կազմերում ևս ընդգրկված և փորձառու թեկնածու Տոնական Ղազարյանին: Տոնական Ղազարյանն ինքնաբացարկ հայտնեց և իր հերթին առաջադրեց Անդրանիկ Վերանյանի թեկնածությունը:

Քվեարկության դրվեցին երկու թեկնածությունները, որի արդյունքում Կարեն Զադոյանը հավաքեց 9, իսկ Անդրանիկ Վերանյանը 5 կողմ ձայն: Անդրանիկ Վերանյանը երկու թեկնածությունների դեպքում էլ մնաց ձեռնպահ:

Քվեարկության արդյունքում նիստի նախագահությունը տրվեց Կարեն Զադոյանին:

Նախագահողը ներկայացրեց նիստի օրակարգը, որում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

- Շահառուների խորհրդի կազմից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի հինգ պատվիրակների ընտրություն,
- Այլ հարցեր:

Նախագահողն առաջարկեց նաև օրակարգում ընդգրկել Շահառուների խորհրդի աշխատանքային պլանը նախագծելու հարցը:

Տոնական Ղազարյանն առաջարկեց օրակարգից հանել առաջին հարցը, նշելով, որ առավել նպատակահարմար կլինի հարցի քննարկումն իրականացնել Շահառուների խորհրդի կանոնակարգի լրամշակումից և հաստատումից հետո:

Ալեքսանդր Տեր-Հովակիմյանը նշեց, որ տվյալ առաջարկը նախորդ նիստի ընթացքում քննարկվել է և որոշումը է ընդունվել ընտրության իրականացումը չկապել ՇԽ կանոնակարգի լրամշակման հետ:

Կարեն Զադոյանը հայտնեց, որ ՇԽ կանոնակարգի լրամշակման համար արդեն իսկ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ձեռնամուխ կլինի փոփոխությունների նախագծմանը և ՇԽ ներկայացմանը: Նախագահողը միաժամանակ ավելացրեց, որ ԿԽ պատվիրակների ընտրության և Կառավարության համապատասխան որոշման ընդունման միջև որպես կանոն անցնում է առնվազն մեկ ամիս, ուստի մինչև կառավարության որոշմամբ տվյալ կազմի հաստատումը ՇԽ կանոնակարգն արդեն իսկ լրամշակված կլինի:

ՇԽ անդամների մեծամասնությունը նշեց, որ անհրաժեշտ է ՇԽ կանոնակարգում ամրագրել ԿԽ պատվիրակների հաշվետվողականության և հետկանչման մեխանիզմները:

Լիլիթ Ասատրյանը նշեց, որ ինքը ևս կարծում է, որ ընտրությունները պետք է իրականացնել ՇԽ կանոնակարգի լրամշակումից հետո, որովհետև ներկայումս դիտարկվում է նաև այն հնարավորությունը, որ տարանջատվեն ՇԽ և ԿԽ անդամ հասկացությունները, ուստի անհրաժեշտ է նախ հանսկանալ այս տարանջատումը գործելու է, թե՛ ոչ: Միայն դրամից հետո ՇԽ

անդամների համար հնարավոր կլինի միարժեքորեն հասկանալ իրենք որտեղ են տեսնում իրենց դերակատարությունը՝ Շահառուների, թե Կառավարման խորհրդում:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը և ինքը մասնավորապես որևէ ներգործություն չեն ուզում ունենալ Շահառուների խորհրդի որոշումների վրա, սակայն տվյալ դեպքում նրանց որոշումը կարող է անդրադառնալ ծրագրի արդյունավետ իրականացման ընթացքի վրա: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն ակնկալում է հոկտեմբեր ամսի վերջին գումարել Կառավարման խորհրդի հերթական նիստը և անհրաժեշտ է մինչև այդ ունենալ լիարժեք իրավագոր Կառավարման խորհրդի կազմ:

Տոնական Ղազարյանն առաջարկեց, որպեսզի մինչև նոր կազմի ընտրությունը Կառավարման խորհրդի նախորդ կազմը շարունակի իր աշխատանքը:

Կարինե Մովսիսյանն առաջարկեց չհետաձգել և անցկացնել Կառավարման խորհրդի պատվիրակների ընտրություն: Վերջինիս առաջարկին միացավ նաև Անդրանիկ Վերանյանը:

Նախագահողն առաջարկեց քվեարկության դնել երկու օրակարգ.

Օրակարգ 1

1. Շահառուների խորհրդի կազմից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի հինգ պատվիրակների ընտրություն,
2. ՇԽ աշխատանքային պլանի քննարկում,
3. Այլ հարցեր:

Օրակարգ 2

1. ՇԽ աշխատանքային պլանի քննարկում,
2. Այլ հարցեր:

Օրակագի առաջին տարբերակն ընդունվեց հետևյալ ձայներով՝ 10 կողմ, 4 դեմ, 1 ձեռնպահ:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.

Արա Հովսեփյանն առաջարկեց Շահառուների խորհրդի ԿԽ պատվիրակների թեկնածուներին ընտրել ինքնաառաջադրման սկզբունքով:

Որպես Կառավարման խորհի անդամության թեկնածու ինքնաառաջադրվեցին՝

- Վիկտոր Ենգիբարյան
- Պողոս Շահինյան
- Արման Ոսկանյան
- Շիրակ Միքայելյան
- Կարեն Չաղոյան
- Կարինե Մովսիսյան

Կարինե Մովսիսյանը խնդրեց հինգ րոպե ընդմիջում վերջնական որոշում կայացնելու համար: Ընդմիջումից հետո տիկին Մովսիսյանը հանեց իր թեկնածությունը:

Նախագահողն առաջարկեց քվեաթերթիկը հաստատել ըստ ներկայացված օրինակի:

Տոնական Ղազարյանը և Միհրան Հովհաննիսյանը առաջարկեցին քվեաթերթիկում ավելացնել նաև «Բոլորին դեմ» տողը:

Առաջարկը և քվեաթերթիկի օրինակը ընդունվեցին միաձայն:

Տոնական Ղազարյանը խնդրեց պարզաբանել, թե քանի ձայն ստանալու դեպքում է յուրաքանչյուր թեկնածու համարվում ընտրված:

Նախագահողը պարզաբանեց, որ Կառավարման խորհրդի անդամներն ընտրվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Արա Հովսեփյանն առաջարկեց ԿԽ թեկնածուներին ներկայացնել իրենց, իրենց կազմակերպությունները և իրենց դերը Կառավարման խորհրդում:

Պողոս Շահինյանը ներկայացրեց իր կազմակերպությունը, մասնավորապես նշելով, որ այն հիմնականում կապված է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ճանապարհաշինության բաղադրիչի հետ:

Շիրակ Միքայելյանը ներկայացրեց, որ ինքն ի ծնե ապրել է մարզում և մոտիկից շփվել մարզային բոլոր խնդիրների հետ: Նա հստակ գիտակցում է, որ առանց գործող ենթակառուցվածների մարզային զարգացումն անհնար է: Հետևաբար ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդում վերջինս կկարողանա մատնացույց անել և հասցեատերերին հասցնել մարզերում առկա բոլոր խնդիրները: Անդրանիկ Վերանյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք ԿԽ անդամ ընտրվելու դեպքում պարոն Միքայելյանը պարտրաս է ՇԽ անդամների հետ քննարկել և ստանալ վերջիններիս կարծիքն այս կամ այն հարցի շուրջ և այդ կարծիքը ներկայացնել Կառավարման խորհրդում: Շիրակ Միքայելյանը հայտեց, որ միանշանակ պատրաստ է լսել և քննարկել Շահառուների խորհրդի յուրաքանչյուր անդամի կարծիքը և ներկայացնել այն Կառավարման խորհրդում:

Արման Ոսկանյանը ներկայացրեց իր կազմակերպությունը և հայտնեց, որ հանդիսանալով ԿԽ անդամության ամենաերիտասարդ թեկնածու դա դիտում է որպես առավելություն, քանի որ իր եռանդն ու ժամանակը իրեն թույլ կտան ավելի ակտիվ մասնակցություն ունենալ յուրաքանչյուր հարցի քննարկմանը և դրական արդյունք բերել ընդհանուր ծրագրի իրականացման համար:

Վիկտոր Ենգիբարյանը ներկայացրեց իր փորձն ու իր կողմից ներկայացվող ընկերությունը, մասնավորապես նշելով, որ «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ն հանդիսանում է եվրոպական համապատասխան ընկերության փորձի շարունակողը Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության գործունեությունն ակտիվացել է Հայաստանի Հանրապետության՝ Եվրոխորհրդին ինտեգրվելուց հետո:

Կարեն Զադոյանը ներկայացրեց, որ ինքը լավ ծանոթ է ՀՀ ՀԿ սեկտորին, պատկերացնում է վերջինիս աշխատանքը, ուստի կարծում է, որ մնանատիպ ծրագրի շնորհիվ գործուն ՀԿ-ները պետք է փորձ անեն նաև դաշտն ազատել “կեղծ” ՀԿ-ներից:

Տոնական Ղազարյանը խնդրեց պարզաբանել, թե ինչպես է պարոն Զադոյանը դիտարկում այն փաստը, որ 40-ից ավել ՀԿ-ներ բոյկոտել են ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի ընտրությունները: Կարեն Զադոյանը պատասխանեց, որ չնայած այն հանգամանքին, որ դա

տվյալ ՀԿ-ների իրավունքն է և ազատ հասարակության մեջ կիրառվող քայլ, այնուամենայնիվ ինքը մտահոգված է և ՇԽ կազմում աշխատանքի ընթացքում կփորձի գնահատել դրա պատճառները:

ԿԽ անդամության թեկնածուների ներկայանալուց և ՇԽ անդամների հարցերին պատասխանելուց հետո ՇԽ անդամները անցան բուն քվեարկությանը:

Ընտրություններից հետո քվեատուփից հանվեցին բոլոր 15 քվեաթերթիկները:

Հաշվարկից հետո ստացվեցին հետևյալ արդյունքները.

- Վիկտոր Ենգիբարյան - 10 կողմ ձայն
- Պողոս Շահինյան – 10 կողմ ձայն
- Արման Ոսկանյան– 10 կողմ ձայն
- Շիրակ Միքայելյան– 10 կողմ ձայն
- Կարեն Զադոյան– 10 կողմ ձայն
- Բոլորին դեմ – 4 ձայն
- 1 քվեաթերթիկ անվավեր

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին հաստատել ընտրության արդյունքները: Արդյունքները հաստատվեցին միաձայն:

Ներկաները շնորհավորեցին Կառավարման խորհրդի նորընտիր անդամներին, հույս հայտնելով, որ վերջիններիս աշխատանքը ԿԽ-ում կլինի արդյունավետ:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ.

Նախագահողը նշեց, որ անրաժեշտ է վերանայել ՇԽ նախորդ կազմի աշխատանքային պլանը, որն առավել արդյունավետ կլինի իրականացնել համապատասխան աշխատանքային խմբի կողմից:

Կարեն Զադոյանն ավելացրեց նաև, որ աշխատանքային պլանի մշակման գործում էական կլիներ Տոնական Ղազարյանի ներգրավվածությունը, քանի որ վերջինս անդամակցում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի կազմին երեք տարի անընդմեջ և ունի լուրջ փորձառություն:

Տոնական Ղազարյանը ինքնաբացարկ հայտնեց աշխատանքային գերծանրաբեռնվածության պատճառով:

Ալեքսանդր Տեր-Հովակիմյանը հայտնեց, որ քանի որ արդեն իսկ ստեղծվել են երկու աշխատանքային խմբեր, որի կազմում ներգրավված են ՇԽ ութ անդամներ, ուստի անհրաժեշտ է, որպեսզի տվյալ աշխատանքային խմբում ներգրավվեն ՇԽ մյուս անդամները:

Որպես աշխատանքային խմբի անդամ իրենց թեկնածությունն առաջարկեցին Արման Ոսկանյանը և Անդրանիկ Վերանյանը: Կարեն Զադոյանն առաջարկեց խմբի կազմում ներգրավել նաև Լիլիթ Ասատրյանին և որպես աշխատանքային խմբի ղեկավար նշանակել Անդրանիկ Վերանյանին:

Շահառուների խորհուրդը միաձայն հաստատեց աշխատանքային խումբը հետևյալ կազմով՝

- Անդրանիկ Վերանյան /խմբի ղեկավար/
- Արման Ռսկանյան
- Լիլիթ Ասատրյան

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ.

Առաջիկա ՇԽ նիստը որոշվեց գումարել հոկտեմբերի 24-ին, ժամը 15:30-ին:

Հարցերի սպառումից հետո Շահառուների խորհրդի նիստն ավարտվեց:

Նախագահող՝

Կ. Չադոյան

Քարտուղարի ժ/պ՝

Ա. Մալիկոյան

13-ը հոկտեմբերի, 2008թ.